«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 4(15)

HISTORY AND POLITICS

ACADEMIC JOURNAL

№4(15)

ԵՐԵՎԱՆ-2021

Հանդեսը տպագրվում է «Զորավար Մեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ Էսդուգյան (Թուրքիա, Ստամբուլ), Գարիկ Քեռյան,
Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան,
Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Հովսեփ Աղաջանյան,
Մարտին Գիլավյան, Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան,
Ռաֆիկ Նահապետյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան

2008 Թ. ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ և ԴԱՇԻՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐՔԻՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳԼՈԲԱԼ-ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՉԱՓՄԱՆ ՄԵՋ. ՆԵՈՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ

ՆԱՐԵԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բանալի բառեր – ՀՀ արտաքին քաղաքականություն, ՀՀ-ՌԴ հարաբերություններ, նեոռալիզմ, ռուս-վրացական պատերազմ, ինտեգրացիոն երկընտրանք, ԵԱՏՄ

Միջազգային հարաբերությունների նեոռեալիզմի դպրոցը պետությունների արտաքին ու դաշինքային քաղաքականությունը ուսումնասիրելիս հատուկ ուշադրություն է դարձնում այն համակարգին, որի մեջ գտնվում է պետությունը, քանի որ այդ համակարգի մեջ ուժերի հավասարակշռումն է, որ պայմանավորում է գոյապահպանմանն ու անվտանգության երաշխիքների ապահովման քաղաքականությունը[1]: Այս հոդվածը նպատակ ունի միջազգային հարաբերությունների այս դպրոցի պրիզմայի միջոցով ուսումնասիրել ռուս-վրացական պատերազմի ազդեցությունը ՀՀ-ՌԴ հարաբերությունների վրա ազդող ներքին-կառուցվածքային և գլոբալ համակարգային նշանակության չափումների վրա[2]: Հետազոտության նման շրջանակի համար հիմք է հանդիսացել ՀՀ-ՌԴ հարաբերությունների ուսումնասիրման համար առաջարկված տեսականացումն[3]:

Հարկ ենք համարում ընդգծել, որ, թեև հետազոտական առարկայի փուլայնացումը կատարվել է ռուս-վրացական պատերազմին հաջորդած ընթացքի շուրջ, դրա հիմքում դրված է *ոչ թե ժամանակագրական*, այլ տվյալ կատակլիզմով պայմանավորված *անվտանգային միջավայրի փո-*

---

[1] **Waltz Kenneth**: Theory of international politics// 1979, Addison-Wesley Pub. Co. p 128; **Waltz Kenneth**: Structural Realism after the Cold War// International Security, Vol. 25, No. 1, p. 28; **Walt Stephen**: The Origins of Alliance// 1987, Cornell University Press, p. 17; **Dunne Tim** and **Schmidt Brian**: 6. Realism in The globalization of world politics: an introduction to international relations, ed. John Baylis, Steve Smith, Patricia Owens// 2014 Oxford University Press, p. 17; **Goetschel Laurent**: The Foreign and Security Policy Interests of Small States in Today's Europe in Small States Inside and Outside the European Union ed. Goetschel Laurent// 1998 Springer US, p. 23.

[2] Տարածաշրջանային չափումն ուսումնասիրող հետազոտության արդյունքերը տես՝ Սուքիասյան Նարեկի առաջիկա հոդվածը:

[3] **Սուքիասյան Նարեկ**: ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող կառուցվածքային գործոնների տեսականացման փորձ և այդ գործոնների ազդեցության էվոլյուցիան// 2020, Գիտական Արցախ №4(7):

փոխության սկզբունքը, որը հետազոտությունը համարում է պայմանական ջրբաժան: Պայմանական այն պատճառով, որ ի սկզբանե հետազոտողը խուսափել է ՀՀ արտաքին քաղաքականության վրա որևէ մի իրադարձության ազդեցության մասին ապրիորի եզրահանգումներ առաջ քաշելուց, ինչպես նաև զերծ է մնացել հենց դրանք նույն մոտեցմամբ արտաքին միջավայրի այլ փոփոխություններից վեր դասելուց: Այնուամենայնիվ, տարածաշրջանային պատերազմները, ըստ էության, անվտանգային միջավայրի փոփոխության ամենաակնառու և ուղիղ արտահայտումն են, և թույլ են տալիս նեոռեալիզմի հետաքրքրության խնդիրների բարձրացման համատեքստում առնվազն պայմանականորեն համարել այն չափումների վերափոխումները փուլայնացնելու սկզբունք:

Այսպիսով, հոդվածը նպատակ ունի *վեր հանել* 2008 թ. ռուս-վրացական պատերազմի ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության՝ մասնավորապես ՀՀ–ՌԴ հարաբերությունները պայմանավորող նեոռեալիստական բնույթի ներքին-կառուցվածքային և գլոբալ չափումների վերափոխումները: Հոդվածը քննում է հետևյալ հետազոտական հարցերը՝

• Փոփոխվե՞լ են արդյոք և ինչպե՞ս են փոփոխվել 2008 թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող ներքին-կառուցվածքային և գլոբալ համակարգային չափումները:

• Արդյոք խթանե՞լ, թե՞ սահմանափակել են այս չափումները ՀՀ արտաքին և դաշինքային քաղաքականությունը նշված ժամանակահատվածում:

Ներքին-կառուցվածքային. 2008 թ. ռուս-վրացական պատերազմը ի ցույց դրեց ՀՀ ներքին կառուցվածքային խոցելիության և կախվածության մի շարք խնդիրներ: Դրա ուղղակի և անմիջական հետևանքներից էր հաղորդակցությունների խզման պատճառով Վրաստանի տարածքով բազային մի շարք ապրանքների՝ այդ թվում հացահատիկի ու վառելանյութի ներկրման անհնարինությունը կամ բարդությունը՝ օրակարգային դարձնելով պարենային անվտանգության և Իրանի տարածքով լրացուցիչ հաղորդակցությունների[1] ապահովամն հարցը: Այդպիսով, Գ-

[1] Հայաստանի էներգետիկ անվտանգության և արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունների հետ կապված կառուցվածքային խոցելիությունները հաղթահարելու կամ մեղմելու բնական միջոց է արտաքին բալանսավորման բազմազանեցումը Իրանի հաշվին, որի ուղղությամբ արտաքին քաղաքական ակտիվության նկատվեց պատերազմից հետո՝ մասնավորապես երկաթուղու կառուցման և իրանական գազի ներմուծման շուրջ: Թեև դրա գիտակցումը կար քաղաքական բարձրագույն մակարդակում, ՀՀ էներգետիկայի նախարարությունը հայտարարեց, որ ռուսական գազը բավարարում է ՀՀ պահանջները, իսկ երկաթգծի կառուցումը խնդրային էր պահանջվող մեծ ներդրումների պատճառով: Ավելին տե՛ս Անահիտ Շիրինյան: Ռուս-վրացական պատերազմի տնտեսական հետեւանքները//2008 Հետք:

լոբալ ֆինանսական ճգնաժամի նախօրեին Հայաստանի տնտեսությունը պատերազմի պատճառով կրեց 600-700 մլն դոլարի վնաս[2] (Melkumian, 2009), իսկ արտահանման կարևորագույն շուկայի՝ ՌԴ-ի հետ ապրանաքաշրջանառության կապը ապահովվում էր ոչ ձեռնտու Փոթի-Բուլղարական նավահանգիստներ-Նովոռոսիյսկ երթուղու միջոցով: Պատերազմի պատճառով Հայաստանը գրանցեց 52 մլն դոլար արտահանման կրճատման կորուստ, իսկ ներմուծումները կրճատվեցին 121.2 մլն դոլարով[3]: Օգոստոսի առաջին կեսին Վրաստանի տարածքով գազի ներմուծման ծավալները կրճատվեցին 30%-ով, ինչից հետո տարանցման վճարը 1 տոննա վառելիքի համար Վրաստանի կողմից բարձրացվեց 50 դոլարով[4]: Ըստ որոշ տնտեսագետների՝ հակամարտության պատճառով ՀՀ-ն նաև զրկվել է 300 մլն դոլարի ներդրումային հնարավորություններից[5]: Թեև ներքին-կառուցվածքային խոցելիությունների շարքից միջազգային ֆինանսական համակարգերի ինտեգրվածության ցածր մակարդակը ի սկզբանե անգամ կառավարության կողմից համարվում է Գլոբալ տնտեսական ճգնաժամից խուսափելու հնարավորություն[6], բայց դրա անուղղակի հետևանքները լրջագույն ազդեցություն ունեցան ՀՀ տնտեսական կարողությունների վրա: Հիմնական գործընկեր պետություններում ճգնաժամի առաջնային ծանր հետևանքներն ընգծեցին ՀՀ ներքին-կառուցվածքային խոցելիությունը՝ այն է հումքահեն և արտերկրից ուղիղ դրամական փոխանցումներից սնվող տնտեսական համակարգը: Պահանջարկի անկման պայմաններում միջազգային շուկայում մետաղական հումքերն արժեզրկվեցին՝ ստիպելով հայկական արդյունաբերողներին նվազեցնել արտահանումը, իսկ որոշներին անգամ կանգնեցրեց փակման եզրին[7]: Մյուս կողմից աշխատանքային միգրանտների հյուրընկալ երկրներում ու հատկապես Ռուսաստանում տնտեսական ճգնաժամի պայմաններում նրանց ծառայությունների նկատմամբ պահանջարկի անկումը անուղղակի բացասական ազդեցություն թողեց ՀՀ ուղղված դրամական փոխանցումների և շղթայաբար՝ աղքատության մակարդակի և շինարարության ոլորտների

---

[1] **Kornely K.Kakachia**: Challenges to the South Caucasus regional security aftermath of Russian–Georgian conflict: Hegemonic stability or new partnership?// 2011, Journal of Eurasian Studies Volume 2, Issue 1, p.17.

[2] **Naira Melkumian:** Russia-Georgia Tensions Harm Armenia// 2009, Հետք:

[3] **Անահիտ Շիրինյան**: Ռուս-վրացական պատերազմի տնտեսական հետեւանքները//2008 Հետք:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] **ՀՀ Կառավարություն**: Հ. Ինչպե՞ս կարող են ազդել համաշխարհային ֆինանսական շուկաներում տեղի ունեցող իրադարձությունները «Բյուջե-2009»-ի վրա:

[7] **Samvel Avagyan**: The Global Financial Crisis: Impact on Armenia// 2009, Volume 8 Number 2, p. 98.

վրա[1]: Վերջինս, որը ճգնաժամին նախորդող տարիներին համարվում էր տնտեսական թռիչքաձև աճի առաջատարը, օտարերկրյա ներդրումների բացակայության պայմաններում կազմեց հետպատերազմյան տարիներին գրանցված տնտեսական անկման ամենամեծ մասնաբաժինը[2]: Թեև ՀՀ մետաղական արտահանումները[3] և դրամական փոխանցումները[4] 2011-2012 թթ. հասան նախաճգնաժամային մակարդակին, սակայն ճգնաժամի երկարաժամկետ ազդեցության պատճառով ՀՆԱ-ն և արդյունաբերության ոլորտը (ներառյալ շինարարությունը) հասան նախաճգնաժամային մակարդակին միայն համապատասխանաբար 2014 թ[5] և 2019 թ[6]:

Ներքին կառուցվածքային այս չափումները իրենց հարաբերական դերը խաղացին նաև Հայաստանի՝ ՄՄ մուտք գործելու որոշման հարցում, որն էլ իր հերթին շղթայաբար հանգեցրեց այս բնույթի խնդիրների[7]: Այսպես, թեև ՄՄ-ի կազմի մեջ Հայաստանը, ի թիվս այլ արտոնությունների ազատվում էր բնական գազի ներկրման տուրքից և տարեկան խնայում 200 մլն դոլար[8], այն ստիպված եղավ 300 մլն դոլար կուտակած պարտքի դիմաց ռուսական կողմին վաճառել «ՀայՌուսԳազԱրդի» վերջին 20% բաժնեմասը[9], ինչն ի ցույց է դնում ՀՀ էներգետիկ անվտանգության խոցելիությունը, որպես արտաքին քաղաքականությունը սահմանափակող ներքին-կառուցվածքային չափում: Նման պարադոքսալ դիխոտոմիա արտահայտվել է նաև աշխատանքային միգրացիայի ոլորտում, որտեղ շնորհիվ ՄՄ-ի աշխատանքի և կապիտալի միասնական շուկայի ակնկալվում

---

[1] **UNWFP**: Armenia: Rapid assessment of the impact of the global financial crisis// 2009, Rome, pp. 13-14.

[2] **Hovsepyan Anna**: The Indirect Effects of the Global Financial Crisis on the Armenian Economy// 2014, American University of Armenia, pp. 33-34.; **Samvel Avagyan**: նշվ. աշխ. p. 99.; **Haroutiun Khachatrian:** Armenia: How a Small Country Counters the Global Crisis// Caucasus Analytical Digest 06/09, p. 5:

[3] **World Bank Data**: Ores and metals exports (% of merchandise exports) – Armenia, https://data.worldbank.org/indicator/TX.VAL.MMTL.ZS.UN?locations=AM.

[4] **World Bank Data**: Personal remittances, received (current US$) - Armenia https://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.CD.DT?locations=AM.

[5] **World Bank Data**: GDP (current US$) – Armenia https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AM.

[6] **World Bank Data**: Industry (including construction), value added (constant LCU) – Armenia https://data.worldbank.org/indicator/NV.IND.TOTL.KN?locations=AM.

[7] **Vahram Ter-Matevosyan, Anna Drnoian, Narek Mkrtchyan, Tigran Yepremyan**: Armenia in the Eurasian Economic Union: reasons for joining and its consequences//2017, Eurasian Geography and Economics, 58:3, pp 348-352.

[8] **Sergey Minasyan**: Armenia Keeps on Balancing between the European Union and the Eurasian Economic Union// 2015, PONARS Eurasia Policy Memo No. 377, p. 3.

[9] **Արմենպրես**: Այս գործարքը շահեկանորեն տարբերվում է գույք-պարտքի դիմաց գործարքից. Արմեն Մովսիսյանն արձագանքել է Ռոբերտ Քոչարյանին. tert.am// 2014:

էր դրամական փոխանցումների աճ, սակայն 2014 թ. հետողրիմյան իրադարձությունների արդյունքում ռուսական տնտեսության անկման հետևանքով 2014 թ. և 2015 թ. դրանք կրճատվեցին 30% և 36%-ով[1]: Արտաքին ու հատկապես ռուսական տնտեսության ցնցումներից նման կախվածության պայմաններում ՄՄ-ին անդամակցման տնտեսական կարճաժամկետ ձեռքբերումների սպասելիքները[2], ի հակադրություն ԵՄ-հետ Ասոցացման ու Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրերի կնքմանը, չարդարացան ռուսական ռուբլիի կտրուկ արժեզրկման և տնտեսական ճգնաժամի պատճառով: Թեև ինտեգրումը ուներ ներուժ բարելավելու ՀՀ ներքին կառուցվածքային դիրքերը աշխատանքային միգրացիայի, էներգետիկ անվտանգության, ենթակառուցվածքների ոլորտներում, այն նաև առաջ էր քաշում այլ խնդիրներ և ստեղծում խոցելիության նոր օջախներ, օրինակ արևմտյան բարձր տեխնոլոգիաների ներմուծման համար ավելի վատ պայմաններ[3], օտարերկրյա ներդրումների անկում[4], արտաքին առևտրի աշխարհագրության դիվերսիֆիկացման սահմանափակումներ, բարձրացված տուրքերի պատճառով երրորդ երկրներից կամ տնտեսական միություններից, ինչպես օրինակ Չինաստանից կամ ԵՄ-ից ներկրումների թանկացում և այլն: Միևնույն ժամանակ հնարավոր չէ միանշանակ պնդել, որ կառուցվածքային մի շարք խոցելիությունների հաղթահարումը պայմանավորված էր բացառապես եվրոինտեգրման հենց ասոցացման ընտրությամբ, քանի որ, օրինակ, սննդի անվտանգության, միգրացիայի ու շարժունակության ոլորտների՝ ԵՄ-ի պահանջներին համապատասխան իրականացվող բարեփոխումներում Հայաստանի գրանցած արդյունքները առնվազն չեն զիջում ասոցացման ճանապարհով գնացած պետությունների արդյունքներին[5]:

Ռուս-վրացական պատերազմի, Գլոբալ ֆինանսական ճգնաժամի ուղիղ կամ անուղղակի հետևանքները բացասական ազդեցություն ունե-

---

[1] **Vahram Ter-Matevosyan, Anna Drnoian, Narek Mkrtchyan, Tigran Yepremyan**: Նշվ. աշխ. pp. 350-351: **Ashot Tavadyan, Aram Safaryan, Mikhail Demidenko**: Armenia and the Customs Union: Impact of Economic Integration//2013, Eurasian Development Bank Centre for Integration Studies Report 20, 2013, pp 38-39.

[2] **Նորավանք հիմնադրամ**: «Մաքսային միությունը հայաստանին տալիս է տնտեսական անվտանգություն, խոշոր ներդրումներ եվ զբաղվածության աճ»// 2013:

[3] **Ղամբարյան Գոհար**: ՀՀ տնտեսական զարգացման հնարավորություններն ԵԱՏՄ շրջանակներում// 2019, ԵՊՀ Գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն, 53(3), էջ 195:

[4] **Ղամբարյան Գոհար**: Նշվ. աշխ. էջ 198:

[5] **Ademmer Esther, Delcour Laure**: With a little help from Russia? The European Union and visa liberalization with post-Soviet states//2016, Eurasian Geography and Economics, 57:1.; **Delcour Laure**: Multiple external influences and domestic change in the contested neighborhood: the case of food safety//2016 Eurasian Geography and Economics, 57:1, 43-65.

ցան Հայաստանի ներքին կառուցվածքային չափումների միտումներում: ՄՄ-ին և ԵԱՏՄ-ին անդամակցության պարագայում նեոռեալիստական չափումների վերափոխումը կամ վերափոխման ներուժը պակաս միանշանակ է, քանի որ, թեև ինտեգրացիոն այդ նախաձեռնություններից կարելի էր ակնկալել առկա սպառնալիքների և խոցելիության հակակշիռներ, սակայն նշված ժամանակահատվածում զգալի հաջողություններ չգրանցվեցին, ավելին, էլ ավելի ընդգծվեցին ՀՀ ներքին կառուցվածքային չափումների հարթության մեջ հայ-ռուսական տնտեսական ասիմետրիկ հարաբերությունների ռիսկերը: Հետպատերազմյան շրջանում այս չափումների նկարագրված միտումները այդպիսով պահպանել են իրենց բացասական ազդեցությունը (ոչ բոլոր դեպքերում հենց պատերազմի ուղիղ հետևանքով) պետության մոբիլիզացիոն ներուժի վրա, նշված ոլորտներում խոցելիությունների ինքնուրույն հասցեագրման անկարողության պայմաններում խորացվել է արտաքին քաղաքա-տնտեսական հարաբերությունների ասիմետրիան ռազմավարական դաշնակցի հետ և սահմանափակվել արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման հնարավորությունները:

Գլոբալ-համակարգային. 2008 թ. ռուս-վրացական պատերազմը կարելի է անկյունաքարային համարել այս չափման համար և դժվար է թերագնահատել դրա կարևորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս չափման վրա ազդելու հնարավորությունները ՀՀ-ի (և ընդհանրապես փոքր պետությունների) համար գրեթե բացակայում են[1]: Թեև այդ տարում ընտրված ԱՄՆ և ՌԴ նախագահները որդեգրվել էին «reset»-ի քաղաքականություն, թե՛ ռուս-վրացական պատերազմը, թե՛ միջազգային աշխարհակարգի, եվրոպական անվտանգության ճարտարապետության, հակահրթիռային պաշտպանության համակարգերի և մի շարք այլ տարաձայնությունների պատճառով նման ակնկալիքները նահանջեցին և 2012 թ. Վլադիմիր Պուտինի վերընտրմամբ ավարտվեցին[2] :

Ռուս-վրացական պատերազմը՝ որպես Ռուսաստանի և Արևմուտքի միջև ազդեցության գոտիների սահմանները պարզելու թեստ, ցույց տվեց վիճարկվող հարևանությունում դրանց կարողությունների և այդ կարողությունները օգտագործելու պատրաստակամության սահմանները: Մինչ ԱՄՆ-ը սահմանափակվում էր հումանիտար օգնությամբ՝ միջնորդական դերը թողնելով եվրոպական գործընկերներին, իսկ ԵՄ-ի (հատկապես Արևմտյան «հին» անդամների) կողմից Վրաստանի պատճառով ՌԴ-ի հետ բազմաշերտ փոխկախվածությունների մեջ գտնվող

[1] **Keohane Robert:** Lilliputians' Dilemmas: Small States in International Politics//1969, International Organization, 23(2), p. 269.

[2] **Forsberg Tuomas, Herd Graeme**: Russia and NATO: From Windows of Opportunities to Closed Doors//2015, Journal of Contemporary European Studies, 23:1, pp. 50-51.

հարաբերությունները վտանգի տակ չդնելու հակվածությունը ու, ընդհանուր առմամբ, Ռուսաստանի հետ ռազմական առճակատման մեջ ներգրավվելու պատրաստակամության բացակայությունը[1] ազդանշաններ էին տարածաշրջանի պետությունների համար ՌԴ-ի և Արևմուտքի միջև անվտանգային և ինտեգրացիոն հարցերում արտաքին հարաբերությունների սթափեցման և հավակնությունների զսպման: Սակայն ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի Վրաստանի չվիճարկած տարածք և ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչումը շրջադարձային եղան գլոբալ չափման մեջ և ստիպեցին կոշտացնել Արևմուտքի մոտեցումը՝ ոչ մի վերադարձ անցյալի հարաբերություններին մինչ ռուսական զորքերի դուրսբերումը: Դրա անմիջական արտահայտումը եղավ 2002 թ. -ից գործող ՆԱՏՕ-ՌԴ խորհրդի կասեցումը[2]: Այդուհետ, երկու բևեռների համար էլ վիճարկվող հարևանության երկրներում ազդեցության գոտիների ամրապնդման կարևոր գործիքներից դարձավ ինտեգրացիոն մեխանիզմների կիրառումը: Մինչ ՌԴ-ն հավակնություններ էր ներկայացնում բազմաբևեռ աշխարհակարգում իր «արտոնյալ շահերի» գոտու վերաբերյալ[3], որը հատկապես 2012 թ. Վլադիմիր Պուտինի վերընտրվելուց հետո ամրապնդվելու էր սեփական ինտեգրացիոն կառույցներով, ԵՄ-ը անդամները նախաձեռնում և կյանքի էին կոչում Արևելյան գործընկերությունը՝ Ուկրաինային, Բելառուսին, Մոլդովային, Վրաստանին, Հայաստանին և Ադրբեջանին տրամադրելով քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման հնարավորություն՝ իհարկե, առանց ինտեգրման հաստատուն հեռանկարի[4]: Թեև ԵՄ-ն տարածաշրջանային կարգի ռևիզիոնիստական այս քայլը որակում էր «արձագանք […] պետությունների պահանջներին [. . . որոնց. . .] առևտրի մեծ մասը ԵՄ-ի հետ է»[5], ՌԴ-ի՝ որպես տարածաշրջանային կարգի ստատուս-քվո ուժի համար այն իր ազդեցության գոտու հաշվին Արևմտյան ազդեցության գոտի ստեղծելու փորձ էր[6]: -

Մի կողմից՝ ազդեցության գոտու պահպանման, մյուս կողմից՝ դրա վերա-

---

[1] Ինչպես նաև Վրաստանի կողմից նման մտադրության բացակայության մասին թյուր պատկերացումներն ու ակնկալիքները:

[2] **BBC:** Nato cools relations with Russia//2008, news.bbc.co.uk.

[3] **RIA**: Медведев назвал "пять принципов" внешней политики России//2009, Ria.ru.

[4] **Dobbins James, Zagorski, Andrei**: Lessons Learned from Russia-West Interactions on European Security in Getting Out from "In-Between" Perspectives on the Regional Order in Post-Soviet Europe and Eurasia, eds. Charap, Samuel, Demus Alyssa, Shapiro Jeremy//2018 RAND Corporation, p. 9.; **James Sherr**: Nagorno-Karabakh Between Old and New Geopolitics in The International Politics of the Armenian-Azerbaijani Conflict, ed. Cornell Svante//2017, Palgrave Macmillan, New York, pp. 60-61.

[5] **BBC**: EU reaches out to troubled East//2009, nwws.bbc.co.uk.

[6] **Pop Valentina**: EU expanding its 'sphere of influence,' Russia says//2009, EUobserver.

նայմանն ուղղված հակամարտող այս ջանքերի համատեքստում[1] վիճարկվող հարևանության գոտու երկրների, այդ թվում Հայաստանի ինտեգրացիոն՝ ըստ գործառույթի մեծապես տնտեսական և մասամբ քաղաքական բովանդակության արտաքին քաղաքական քայլերը *անվտանգայնացվեցին*՝ հիմք դնելով «կա՛մ-կա՛մ» մրցակցությանը: Այդ պարագայում ՌԴ-ն որպես ստատոս-քվո ուժ գործիքայնացրեց այն կախվածության լծակները, որոնցով ԱԼԳ պետությունները կապված էին իրեն[2]: Հայաստանի դեպքում՝ ըստ Դելքուրի, ՌԴ-ի «Համերկրացիներ» ծրագրի վերագործարկումը[3], ռուսական զենքի մեծածավալ վաճառքը Ադրբեջանին, Վլադիմիր Պուտինի այցն այդ երկիր, ինչպես նաև Հայաստանին վաճառվող գազի 50% թանկացումը գործոններ էին, որոնք ազդում էին ԵՄ-ի հետ Ասոցացման ու խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրեր կնքելու հավակնության վրա[4]: Մինչ ՀՀ-ն պատրաստվում էր 2013 թ. նոյեմբերին Վիլնյուսում ստորագրել վերոնշյալ համաձայնագրերը, իսկ ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ հայտարարում էին ՄՄ-ին միանալու աննպատակահարմարության մասին[5], սեպտեմբերի 3-ին Սերժ Սարգսյանի Մոսկվա կատարած այցի ընթացքում հայտարարվեց հակառակը[6]:

Ինչպես նշում են Տեր-Մաթևոսյանը և այլոք՝ դժվար է չափել և միանշանակ գնահատական տալ, թե ինչքանով է այդ ճնշումների դերը որոշիչ եղել, ինչպես նաև այն մասին, թե ինչպիսի հանձնառություններ է Հայաստանը վերցրել ԵՄ-ի առաջ, սակայն ակնհայտ է հայտարարված արտաքին քաղաքական նպատակների և արդյունքի անհամատեղելիությունը, որը վկայում է մի շարք ներքին կառուցվածքային և արտաքին սահ-

---

[1] **Kazharski Aliaksei, Makarychev Andrey**: Suturing the Neighborhood? Russia and the EU in Conflictual Intersubjectivity//2015 Problems of Post-Communism, 62:6, pp 328-329.; **Bechev Dimitar**: Understanding the Contest Between the EU and Russia in Their Shared Neighborhood//2015 Problems of Post-Communism, 62:6, 344.

[2] **Shirinyan Anahit, Ralchev Stefan**: U-turns and Ways Forward: Armenia, the EU and Russia Beyond Vilnius// 2013, Institute for Regional and International Studies, p. 4.; **Ademmer Esther, Delcour Laure**: Նշվ. աշխ.:

[3] Այն կարող էր աճող արտագաղթի պայմաններում էլ ավելի խթանել այն:

[4] **Delcour Laure: Faithful But Constrained?** Armenia's Half-Hearted Support for Russia's Regional Integration Policies in the Post-Soviet Space//2014**,** London School of Economics Ideas: Geopolitics of Eurasian Integration, pp. 42-43.

[5] **Галстян Нарек**: Евразийская тематика на внутриполитической повестке армении: позиции и оценки исполнительной власти и основных политических сил (аналитический обзор)//2013, Внешняя политика республики армения. Проблемы и вызовы. Научно-практическая конференция, посвященная 22-летию независимости РА, ЕГУ, стр. 122-124.

[6] **Asbarez**: EU Will Not Sign Agreement with Armenia, Commissioner Says//2013, Asbarez.am

մանափակումների անհաղթահարելիության մասին[1]: Այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ այդ փուլում գլոբալ-համակարգային նման փոխբացառող և հակամարտային միջավայրի ճնշման համատեքստում և հատկապես դրան առնչվող հարցերի տիրույթում հայ-ռուսական հարաբերություններում Հայաստանի կողմից Ռուսաստանի համար ընդունելի արտաքին քաղաքական որոշումների կայացման ավելի արտահայտիչ և ուսումնասիրելի օրինակ է 2014 թ. մարտի 27-ին ՄԱԿ ԳԱ-ում Ղրիմի հանրաքվեն անվավեր ճանաչող բանաձևին ՀՀ-ի դեմ քվեարկելը՝ Ռուսաստանի և 11 այլ պետությունների հետ միասին, մինդեռ նախօրեին հայտարարվել էր ձեռնպահ քվեարկելու նպատակադրության մասին[2]: Համեմատության մեջ՝ այս որոշումը, որը հանգեցրեց Ուկրաինայի հետ հարաբերությունների վատթարացմանը և բացասաբար ազդեց ՀՀ միջազգային հեղինակության վրա[3], ուներ մանների ավելի լայն հնարավորություն, քանի որ, ի տարբերության ինտեգրացիոն երկընտրանքի՝ այստեղ բացակայում էր երկփեղկված ընտրության հրամայականը, որոշման բովանդակությունն իր ծավալով և կարևորությամբ զիջում էր Ասոցացում-ՄՄ խնդրի բովանդակությանը, ինչպես նաև բուն քվեարկության ձևաչափը տրամադրում էր ավելի լայն հնարավորություններ: Սակայն այս դեպքը ոչ այնքան խոսուն է ՀՀ արտաքին քաղաքական ինքնավարության մասին նորմատիվ հարթության մեջ, այլ այն ազդեցության մասին, որը գլոբալ-համակարգային չափման մեջ անվտանգային երկընտրանքի, հակամարտային և փոխբացառող միջավայրը ունենում է առաջին հերթին անվտանգության առաջնահերթությունների վրա հիմնած փոքր պետության դաշինքային հարաբերությունների ասիմետրիայի վրա:

Միևնույն ժամանակ անհամաչափության (ասիմետրիա) նման իրավապայմանագրային (հաշվի առնելով, մի կողմից, ՄՄ-ի և տնտեսական միության, մյուս կողմից՝ ազատ առևտրի գոտու փոխբացառող առանձնահատկությունները) և քաղաքական խորացումը բավարար երաշխիքներ տվեցին ՌԴ-ին Հայաստանի արտաքին քաղաքականությունը

---

[1] **Vahram Ter-Matevosyan, Anna Drnoian, Narek Mkrtchyan, Tigran Yepremyan:** Նշվ. աշխ., p. 355. Հարկ է նշել, որ հենց չափելության անհնարինության այս հանգամանքն է, որ անհնար է դարձնում կոնկրետ սահմանափակումների (քաղաքական, անվտանգային, արտաքին) մեթոդահեն պատճառահետևանքային քննարկումը: Դրանց տարատեսակ մեկնաբանությունները և հիմնավորումները տրվել են քաղաքական էլիտաների կողմից՝ արդարացնելու, հիմնավորելու կամ քննադատելու արտաքին նման քաղաքական որոշումը, որոնց ուսումնասիրությունը դուրս է հետազոտության խնդիրներից:

[2] **Vahram Ter-Matevosyan:** Armenia and the Ukrainian Crisis: Finding the Middle Ground//2014, Caucasus Analytical Digest.: **RFE/RL**: UN Passes Resolution Calling Crimean Referendum Invalid//2014.

[3] **MasisPost**: US Ambassador Regrets Armenia Statement on Crimea//2014.; **RFE/RL**:Carl Bildt: 'Every Carrot To Kyiv Is A Stick To Moscow'//2014.; **The Economist**: Armenia sides with Russia over Crimea/2014.

այլևս չդասելու վերոնշյալ գլոբալ-համակարգային մրցակցության տիրույթին: Դաշինքային հավատարմության երաշխիքները դուրս բերեցին պետությունը «կա՛մ-կա՛մ» մրցակցությունից՝ պարադոքսալ կերպով մեծացնելով Հայաստանի արտաքին քաղաքականության մանևրի հնարավորությունները, նվազեցնելով դաշնակցի համար ոչ միանշանակ հարցերում արձագանքի ռիսկերը, բայց և իհարկե սահմանափակելով արտաքին քաղաքականության «որոշումների զամբյուղը», որից կարող էր օգտվել ՀՀ-ն: Բացի այդ, սիրիական ճգնաժամում ՌԴ-ի ներգրավումը բարձրացրեց ՀՀ աշխարհաքաղաքական նշանակությունը (նպաստելով մանևրի հնարավորությունների մեծացմանը կամ ասիմետրիայի կրճատմանը)՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում էր տեղակայված օդուժ պարունակող ամենամոտ տարածաշրջանին ռազմաբազան[1] :

Այսպիսով, հայ-ռուսական հարաբերությունների՝ հետ-ռուս-վրացական պատերազմի նեոռեալիստական չափումները բոլոր 3 դիտարկվող մակարդակներում՝ ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային, գլոբալ-համակարգային, ունեցել են հիմնականում սահմանափակող միտում: Կարելի է ամփոփել պատերազմի ուղիղ և անուղղակի հետևանքները (ինչպես նաև այս չափումների այլ գործոններ, որոնք ի հայտ են եկել կամ ձևափոխվել են 2008-2016 թթ. ընթացքում՝ անկախ պատերազմից)՝ փորձելով դասակարգել դրանք ըստ ՀՀ արտաքին դաշինքային քաղաքականությունը խթանող կամ սահմանափակող բնույթի:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ 2008-2016 թթ. ընթացքում նեոռեալիստական բնույթի վերոնշյալ չափումների գերակշիռ մասը բացասական ազդեցություն են ունեցել ոչ միայն հայ-ռուսական հարաբերությունների վրա, այլև ՀՀ արտաքին քաղաքականության վրա ընդհանրապես: Հայ-ռուսական հարաբերությունների վրա դրանցից ներքին կառուցվածքային չափումների սահմանափակող ազդեցությունը կապված է ՀՀ ներքին կառուցվածքային թուլություններից որոշների խորացման և/կամ դրանք ինքնուրույն հաղթահարելու անկարողության/անպատրաստության հետ: Արդյունքում Հայաստանը այդ խնդիրների արտապատվիրման նպատակով ստիպված է եղել դիմել դաշնակցին, ինչի արդյունքում կորցրել է այդ հարցերում ինքնուրույնության որոշակի մակարդակ՝ հարաբերությունների այդ հարթությունները մղելով դեպի «ակտիվների կառավարման» դաշտ, խորացնելով ենթադաշնակցումը: Թեպետ պետք է նշել, որ այս ընթացքում իրականացվող ներքին կառուցվածքային խոցելիության հաղթահարմանը ուղղված, այդ թվում՝ ինստիտուցիոնալ բարեփոխումները տպավորիչ ընթացք ունեցան (պայմանավորված նաև ռուս-

[1] **Minasyan Sergey**: Armenia and Russia: Pragmatics and Stereotypes//2015, The Russian International Affairs Council.

վրացական պատերազմից հետո արված կազդուրիչ հետևություններով)՝ հնարավորություններ ստեղծելով երկարաժամկետ կայուն զարգացման համար ու մասամբ կանխելով վերոնշյալ կամ նոր կախվածությունների կոնսոլիդացումը: Գլոբալ-համակարգային չափման մեջ, որի վրա փոքր պետությունների ազդեցությունը անէական է, Արևմուտքի և ՌԴ-ի միջև ազդեցության գոտիների ձևավորման/ամրապնդման մասին փոխադարձ անվտանգայնացված պատկերացումները մեծապես սահմանափակեցին դրանց միջև վիճարկվող հարևանության պետությունների, այդ թվում՝ Հայաստանի արտաքին քաղաքականությունը՝ պարտադրելով (ռացիոնալ հաշվարկում) անհամաչափ հարաբերությունների խորացում այն կողմի հետ, որից կախվածության արդյունք հանդիսացող խոցելիության ռիսկերը ավելի մեծ էին: Այնուամենայնիվ, հավատարիմ դաշնակցային հարաբերությունների դրսևորումը՝ ամրագրված դրանցից շրջադարձ չկատարելու ինստիտուցիոնալ և քաղաքական (ՄՄ, ԵԱՏՄ, միջազգային աջակցություն) երաշխիքներով, Հայաստանի համար մասամբ ապահովտանգայնեցրին զրոյական արդյունքով ԵՄ-ՌԴ խաղը, որի օգուտները քաղվեցին ավելի ուշ, երբ 2017 թ. հնարավոր եղավ ստորագրել ԵՄ-ՀՀ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:

Нарек Сукиасян, Влияние российско-грузинской войны 2008 года на внешнюю и союзническую политику Армении на уровне внутриструктурных и глобально-системных факторов. Неореалистический взгляд - Статья направлена на выявление трансформаций внутриструктурных и глобально-системных факторов, исходящих из школы неореализма, которые обуславливают внешнюю политику Армении и, в частности, армяно-российские отношения в среднесрочной перспективе после российско-грузинской войны 2008 года.На уровне внутриструктурных факторов рассматриваются вопросы коммуникаций и инфраструктуры, внешнеэкономических связей и других вопросов мобилизации ресурсов, которые стали актуальными после войны (или просто были назрели после ее окончания). На уровне глобально-системных факторов исследуется влияние попыток интеграции или создания зон влияния в манере взаимно исключающей игры с нулевой суммой между Россией и Западом.

Narek Sukiasyan, The influence of the 2008 Russian-Georgian war on Armenia's foreign and alliance policy on the level of domestic-structural and global-systemic factors. A neorealist perspective - The article aims to reveal the transformations of domestic-structural and global-systemic factors deriving from the school of neorealism that condition Armenia's foreign policy and particularly the Armenian-Russian relations in the mid-term perspective in the

aftermath of the 2008 Russian-Georgian war. At the level of the domestic-structural factors the issues of communications and infrastructure, external economic relations and of other resource mobilization matters are discussed that have become actual in the aftermath of the war (or simply after the war). The level of global-systemic factors studies the influence of the Western-Russian attempts to integrate or establish zones of influence in a manner of reciprocally excluding zero-sum game.